ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ «ԶԱՆԳԱԿ» ՀՈԱԿ Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

*Հ.Հ. Ք.ՉԱՐԵՆՑԱՎԱՆ /0226/ 4-31-42*
*Քոչարիփողշինությունթիվ 15*

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի
հնարավոր մասնակիցների ղեկավարներին

N11
*19 մարտի 2015թ.*

Հարգելի՛ Մասնակից,

<<ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Չարենցավան համայնքի <<Զանգակ>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում <<ՉՔ-ԶՄՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2>>:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Չարենցավան, Քոչարի փողոց թիվ 15 հասցեով, մինչև 2015թ. մարտի 31-ը, ժամը $12^{00}$-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է գրանցամատյանի վարման պատասխանատու Հ. Հակոբյանը: Հայտերը գրանցամատյանի վարման պատասխանատուի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Չարենցավան համայնքի <<Զանգակ>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքում, ք. Չարենցավան, Քոչարի փողոց թիվ 15 հասցեով, 2015 թվականի մարտի 31-ին, ժամը $12^{00}$-ին:

Գնման առարկա է հանդիսանում Չարենցավան համայնքի <<Զանգակ>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերումը:

Չարենցավան համայնքի <<Զանգակ>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 Հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում, պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Չարենցավան համայնքի <<Զանգակ>> մ/մանկապարտեզ ՀՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gnumnerlusavan@mail.ru:

Հարգանքներով՝

<<Զանգակ>> մ/մ ՀՈԱԿ-ի տնօրեն Զ.Ավետիսյան